Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 26

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2008թ. փետրվարի 7-ին ժամը 12:00-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Հրաչիկ Ջավադյանը	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամի գործադիր տնօրեն
Ծովինար Ղազարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն, Կառավարման խորհրդի անդամ Կարեն Նազարյանի լիազոր ներկայացուցիչ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Հովիկ Աբրահամյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նազելի Վարդանյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման խորհրդի քարտուղար
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Գայանե Հարությունյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի գործերի կառավարիչ
Վահե Մկրտչյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում «Տվյալների որակի գնահատման նպատակով» անհատ խորհրդատուի մրցույթը չեղյալ հայտարարելու մասին ծանուցման քննարկում և հաստատում:
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի վարկային ծրագրին

մասնակցության համար հավատարմագրված ֆինանսական հաստատությունների ցանկի քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի գնումների պլանի փոփոխության քննարկում և հաստատում:

4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Վեց մայր ջրանցքների նախագծում և շինարարության վերահսկում» պայմանագրի փոփոխության հիմնավորման փաստաթղթի քննարկում և հաստատում:

6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման յոթ ջրամբարների կառուցման/վերականգնման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի կարճ ցուցակի և Առաջարկների ներկայացման հրավերի քննարկում և հաստատում:

7. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի «Առաջին փաթեթի շինարարական աշխատանքների իրականացման տեխնիկական վերահսկողության» խորհրդատվական պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

8. Այլ հարցեր.

ա/ Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար Առաջարկների ներկայացման հրավերի տիպային ձևի հետ կապված խնդրի լուծման վերաբերյալ տեղեկանքի քննարկում և հաստատում,

բ/ «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածքների գործունեություն բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ոռոգման ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/002 խորհրդատվական ծառայությունների մատուցման համար «Առաջարկներ ներկայացնելու հրավերում» կատարված փոփոխությունների քննարկում և հաստատում:

գ/ «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ մասնավոր կազմակերպության հետ Արգիճի գետի վրա ոռոգման և էներգետիկ ջրամբարի համատեղ կառուցման հնարավորության քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում «Տվյալների որակի գնահատման նպատակով» անհատ խորհրդատուի մրցույթը չեղյալ հայտարարելու մասին ծանուցումը:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ հարցադրում կատարեց Արայիկ Հովհաննիսյանը, նշելով, որ ներկայացված տեղեկանքի համաձայն գումարը տրամադրվելու է բանկերին և վարկային կազմակերպություններին որպես վարկ 4% տոկոսադրույքով, սակայն պարզ չի, թե ինչ տոկոսադրույքով են վերջիններս այդ գումարը տրամադրելու վարկառուներին և կա արդյո՞ք հնարավորություն, որ բոլոր մասնակից կազմակերպությունները ձեռք բերեն պայմանավորվածություն և ներկայացնեն բարձր տոկոսադրույքներ և ամրագրված է արդյո՞ք առավելագույն թույատրելի տոկոսադրույքի սանդղակը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ բանկերի և վարկային կազմակերպությունների ընտրության մրցույթն իրականացվելու է հոլանդական աճուրդի սկզբունքով, այն է՝ մրցույթի հաղթող է ճանաչվելու մեկնարկային տոկոսադրույքի վրա հավելյալ նվազագույն տոկոսադրույք ներկայացրած ընկերությունը:

ՀՄՀ-Հայաստան Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը նշեց, որ նմանատիպ կարգով վարկերի տրամադրման փորձ արդեն իսկ առկա է և այն գործում է բավականին արդյունավետ: ՀՀ Վարչապետը ավելացրեց նաև, որ չի տեսնում անհանգստության պատճառ, քանի որ փոքր է հավանականությունը, որ բոլոր մասնակից ընկերություններն առաջարկեն բարձր տոկոսադրույքներ:

Սիմոն Ղոնաղչյանը խնդրեց պարզաբանել, թե արդյոք ներկայացված ընկերությունների թվարկումը կատարվել է ռեյտինգային կարգով, ինչին Արա Հովսեփյանը տվեց բացասական պատասխան:

Քննարկումների արդյունքում **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի վարկային ծրագրին մասնակցության համար հավատարմագրված ֆինանսական հաստատությունների ցանկը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի գնումների պլանի փոփոխությունը:

Օրակարգի 4-րդ հարցի քննարկման ընթացքում ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հարցրեց Արա Հովսեփյանին, թե ինչու՞ չի կարող մեկ առաջադրանքի իրականացման մեջ ներգրավված անձը միաժամանակ իրականացնել նաև այլ առաջադրանք, եթե օրինակ՝ անձը ցանկություն ունի աշխատել նորմավորված աշխատաժամանակից ավել:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ գնումների գործընթացի համաձայն անհրաժեշտ է հաշվարկել, թե ինչ ժամաքանակով է տվյալ անձն ընդգրկված այս կամ այն առաջադրանքի կատարման գործում և դա պայմանավորված է որակյալ աշխատանք ստանալու անհրաժեշտությամբ:

Վարդան Խաչատրյանն ավելացրեց, որ տվյալ պարագայում առաջանում է ռիսկերի գնահատման անհրաժեշտություն, թե 40 (քառասուն) ժամից ավել աշխատելու պարագայում ինչ որակի ծառայություն կարող է մատուցել տվյալ աշխատողը:

ՀՀ Վարչապետը խնդրեց պարզաբանել նաև այն հարցը, թե ինչով է պայմանավորված առաջին և երկրորդ տեղերում գտնվող ընկերությունների գնային առաջարկների միջև առկա էական գնային տարբերությունը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց գնումների պլանով տվյալ հանձնարարականի իրականացման համար նախատեսված գումարը և հայտնեց, որ տվյալ գնային տարբերության առկայությունը մեծ անհանգստություն չի առաջացրել ՊՈԱԿ-ի մոտ:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքները:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ հարցադրում կատարեց Աշոտ Ոսկանյանը, որին հետաքրքրում էր այն հարցը, թե արդյո՞ք խորհրդատուն արդեն իսկ ունի պատրաստի նախագծեր:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ նախնական նախագիծն արդեն պատրաստման փուլում է, իսկ վերջնականը՝ դեռ ոչ:

Պարոն Ոսկանյանը խնդրեց պարզաբանել, թե հնարավոր չէ արդյոք ժամկետների խնայման նկատառումներից ելնելով շինարարական աշխատանքներ իրականացնող ընկերության ընտրությունը կատարել ավելի պարզեցված, օրինակ՝ մեկ աղբյուրից գնման եղանակով:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ՀՄԿ-ի տեսանկյունից ցանկալի չէ շինարարական աշխատանքների ձեռքբերումը մեկ աղբյուրից:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանն ավելացրեց, որ մեկ աղբյուրից շինարարական աշխատանքների ձեռքբերումը ՀՀ կառավարության տեսանկյունից ևս ընդունելի չէ:

Միաժամանակ ՀՀ Վարչապետը նշեց, որ ներկայացված տեղեկանքում նշված է, որ վեց մայր ջրանցքների սպասարկման տակ են գտնվում շուրջ 117 հազար հեկտար հողատարածքներ, որոնք կազմում են ներկայումս Հայաստանում ոռոգվող տարածքների մոտ 80%-ը: ՀՀ Վարչապետը հանձնարարեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին պարզելու ներկայացված թվերի ճշգրտությունը, մասնավորապես, թե իրականում այդ տարածքները ներկայումս Հայաստանում ոռոգվող տարածքների քանի տոկոսն են կազմում և այդ մասին զեկուցել իրեն:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի «Վեց մայր ջրանցքների նախագծում և շինարարության վերահսկում» պայմանագրի փոփոխությունը:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ Կարինե Դանիելյանը խնդրեց պարզաբանել այն հարցը, թե արդյո՞ք կատարվել է կառուցվելիք ջրամբարների տարածքների բնապահպանական փորձաքննություն:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ներկայումս հավաքվում է անհրաժեշտ ելակետային ինֆորմացիա փորձաքննության փաստաթղթերի պատրաստման նպատակով:

Պարզաբանումից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի «Ոռոգման յոթ ջրամբարների կառուցման/վերականգնման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» մրցույթի կարճ ցուցակը և Առաջարկների ներկայացման հրավերը:

Օրակարգի 7-րդ հարցի քննարկման ընթացքում իր անհանգստությունը հայտնեց Անդրանիկ Մանուկյանը՝ նշելով, որ Խորհրդատուի հետ համատեղ հանդես եկող «Առոսա» ՍՊԸ-ն մասնակցում է մեծ քանակությամբ մրցույթներում՝ և՛ Ասիական Զարգացման Բանկի և՛ ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակներում կազմակերպված: Հետևաբար հարց է առաջանում, թե արդյո՞ք ընկերությունն ունի անհրաժեշտ հնարավորություններ բոլոր ծառայությունների արդյունավետ իրականացման համար:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ գնահատող հանձնաժողովը տվյալ հարցի կապակցությամբ անհանգստության որևէ պատճառ չի տեսել և բարձր է գնահատել «Քոքս Քոնսալթ» և «Առոսա» ընկերությունների ներկայացրած առաջարկը: Բացի դրանից պայմանագրի կատարման հիմնական դերակատար է հանդիսանալու«Քոքս Քոնսալթ» ընկերությունը:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հարցրեց, թե արդյոք վերահսկողը պատասխանատվություն կրում է այն դեպքում, եթե ի հայտ են գալիս ճանապարհի որակի հետ կապված խնդիրներ, թե այդ պատասխանատվություն կրում է բացառապես շինարարը:

Անդրանիկ Մանուկյանը պարզաբանեց, որ պայմանագրի ավարտից հետո մեկ տարի ժամկետով պահվում է պայմանագրի գումարի 5%-ը, իսկ մեկ տարի հետո, եթե որևէ թերություններ ի հայտ չեն գալիս, այդ գումարը վերադարձվում է շինարարին, որից հետո տվյալ օբյեկտը մտցվում է պետական հաշվեկշիռ և այնուհետ որևէ մեկը պատասխանատվություն չի կրում:

Վարդան Խաչատրյանն ավելացրեց, որ պայմանագրերում ամրագրվում է, որ գործունեությունը պետք է իրականացվի ՀՀ պետական ստանդարտների համապատասխան: Հետևաբար որևէ խնդիր առաջանալու դեպքում ստուգվում է, թե արդյոք այդ ստանդարտները պահպանվել են, եթե՝ ոչ, ապա վերահսկողը կրում է պատասխանատվություն:

Պարզաբանումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի «Առաջին փաթեթի շինարարական աշխատանքների իրականացման տեխնիկական վերահսկողության» խորհրդատվական պայմանագրի նախագիծը:

Վահրամ Ներսիսյանցն առաջարկեց կազմակերպել շրջայցեր և տեղում ուսումնասիրել իրավիճակը ու ծանոթանալ առկա խնդիրներին:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանն ընդունեց առաջարկը, սակայն առաջարկեց շրջայցերի կազմակերպումը հետաձգել մինչև գարուն:

Օրակարգի 8-րդ հարցի

ա/ կետի վերաբերյալ հարցադրում կատարեց Անդրանիկ Մանուկյանը՝ ցանկանալով ճշտել, թե արդյո՞ք տվյալ դրույթն տարածվում է նաև նախկինում կնքված պայմանագրերի վրա:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հայտնեց, որ դրույթը հետադարձ ուժ չունի:

Արայիկ Հովհաննիսյանը խնդրեց պարզաբանել տեղեկանքի 2-րդ կետը, մասնավորապես գումարը հետագայում վերանայելու խնդիրը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ հետագայում ասելով հասկանում ենք, որ գումարը վերանայվում է պայմանագրերի մեջ ամրագրված վճարումների ժամանակացույցի համապատասխան:

Վահրամ Ներսիսյանցը հարցրեց, թե արդյո՞ք փոխարժեքի տատանման ռիսկը կրում է կապալառուն, թե հնարավորություն կա, որ այդ ռիսկը կարող է տարածվել նաև պետության վրա:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը պարզաբանեց, որ տվյալ դեպքում ռիսկայնության տեղափոխման խնդիր ըստ էության չկա, քանի որ խորհրդատուն ինքն է որոշում ինչ արժույթով ներկայացնել գնային առաջարկը և հնարավորություն ունի գնահատելու այս կամ այն դեպքում իր ռիսկայնությունը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ նախկինում ընկերություններին պարտադրվում էր գնային առաջարկ ներկայացնել միայն ԱՄՆ դոլարով, սակայն հետագայում այդ գումարը փոխարկվում էր ՀՀ դրամի և պայմանագիր կնքվում ՀՀ դրամով: Տվյալ իրավիճակում ընկերությունների մոտ լուրջ մտահոգություն էր առաջանում՝ կապված ԱՄՆ դոլարի փոխարժեքի հնարավոր տատանման հետ: Հաշվի առնելով հենց այդ խնդիրը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից առաջարկվել էր ՀՄԿ-ին վերանայել ընդունված մոտեցումը և ստացվել էր վերջինիս համաձայնությունը: Միաժամանակ ՀՄԿ-ի կողմից առաջարկվել է ստեղծել պահուստային ֆոնդ՝ արդեն իսկ ստանձնած և հետագա պարտավորությունների ամբողջական ծածկման ապահովման համար:

Պարոն Ներսիսյանցը նշեց, որ գործարարական ռիսկը հենց գործարարի գործն է և այն երբևէ չի կարող դրվել պետության վրա:

Ալեքս Ռասինը ներկաներին հայտնեց, որ տվյալ պարագայում խնդիրը կապված է ոչ միայն ԱՄՆ դոլարի փոխարժեքի, այլև առաջին հերթին ծրագրի ծավալների հետ: Ծրագրի կնքման ժամանակ ՀՄԿ-ն կանխատեսումներ էր կատարում գյուղական շրջանում եկամուտների ավելացման և գյուղական աղքատության նվազման արդյունավետության հետ կապված: Սակայն ՀՀ դրամի արժևորման արդյունքում ծրագրի ծավալները և համապատասխանաբար շահառուների շրջանակը նվազել է և այդ պատճառով էլ հնարավոր է, որ 5-10 տարի հետո գնահատումներն արձանագրեն, որ այն ավելի ցածր արդյունավետություն է ունեցել, քան ի սկզբանե նախատեսված էր: Այդ հարցում որևէ մեկը մեղավոր չէ: Ալեքս Ռասինն ավելացրեց նաև, որ ՀՄԿ-ն բավարարված է այն հանգամանքով, որ ՀՄՀ-Հայաստան ծրագիրը հանդիսանում է ՀՀ պետական ծրագրի մաս և արդեն իսկ ունեցել է իր դրական ազդեցությունը: Սա նշանակում է, որ եթե նույնիսկ ծրագրի շրջանակներում նախատեսված բոլոր միջոցառումները հատկացված գումարների շրջանակում հնարավոր չլինի իրականացնել պետությունը ձեռնամուխ կլինի դրանց իրականացման գործին:

Ալեքս Ռասինը միաժամանակ հայտնեց, որ ինքն իր նամակում համաձայնություն է տվել պայմանագրերը ՀՀ դրամով կնքելուն, քանի որ դա կապալառուներին վստահություն կներշնչի և կոգեշնչի կատարելու ավելի լավ աշխատանք: Սակայն պարզ է, որ եթե ԱՄՆ դոլարը շարունակի արժեզրկվել, ապա ծրագրի ծավալները կկրճատվեն և վերջինիս ազդեցությունը կնվազի, բայց այն փաստը, որ ՀՀ Կառավարությունն ի վերջո կիրականացնի ծրագրից դուրս մնացած բոլոր միջոցառումները, անչափ կարևոր է ՀՄԿ-ի համար:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը, հավանություն տալով պարոն Ռասինի վերոնշյալ մեջբերմանը, նշեց նաև, որ ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տրամադրված գումարները նաև նպաստել են ՀՀ դրամի արժևորմանը: Փաստորեն ծրագրի շնորհիվ իրականացվում են ոչ միայն ծրագրով նախատեսված հիմնական միջոցառումները, այլև այն հավելյալ ազդեցություն է ունենում ՀՀ տնտեսության վրա:

Ալեքս Ռասինը փաստեց, որ ի սկզբանե հնարավոր չէր գնահատել ծրագրի արդյունավետության աստիճանը: Ի վերջո ծրագիրը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհ և ՀՄԿ-ի միակ նպատակն է աջակցել այդ դրամաշնորհի արդյունավետ իրականացմանը, որի համար էլ ՀՄԿ-ն առաջարկել էր ՀՀ կառավարությանը փոխարժեքի տատանման ռիսկը դնել կապալառուի վրա, սակայն այդ առաջարկը մերժվել է և ՀՄԿ-ն ընդունել է ՀՀ կառավարության որդեգրած մոտեցումը:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանն այդ կապակցությամբ իր շնորհակալությունը հայտնեց Ալեքս Ռասինին:

Պարզաբանումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց** ընդունել ի գիտություն Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար Առաջարկների ներկայացման հրավերի տիպային ձևի հետ կապված խնդրի լուծման վերաբերյալ ներկայացված մոտեցումը և այսուհետ կիրառել այն:

բ/ կետի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածքների գործունեություն բաղադրիչի շրջանակներում «Երրորդ կարգի ոռոգման ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/002 խորհրդատվական ծառայությունների մատուցման համար «Առաջարկներ ներկայացնելու հրավերում» կատարված փոփոխությունները:

գ/ կետի վերաբերյալ մտահոգություն հայտնեց Վարդան Խաչատրյանը: Պարոն Խաչատրյանը նշեց, որ նմանատիպ ծրագրի իրականացումն իր մեջ վտանգ է պարունակում այն մասով, որ հանդիսանում է նախադեպ: Բացի այդ նմանատիպ ծրագիր սկսելուց առաջ անհրաժեշտ է գնահատել արդյոք տվյալ գետի ջուրը բավարար է և՝ ոռոգման և՝ ՀԷԿ-ի աշխատանքի համար: Պետք է ամրագրել այն փաստը, որ առաջնայինը հանդիսանում է ոռոգման խնդիրը:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը նշեց, որ համաձայնության առկայության դեպքում անհրաժեշտ բոլոր պայմանները պետք է նախատեսվեն կնքվելիք պայմանագրով:

Կարինե Դանիելյանը խնդրեց պարզաբանել, տեղեկանքում տեղ գտած հետևյալ դրույթը. «շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը սպասվում է», ինչպես նաև այն հարցը, թե ինչ միջոցառումներ կձեռնարկվեն, եթե ՇՄԱԳ-ի եզրակացությունը լինի բացասական:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ սպասվում է տեխնիկական գնահատման գործընթացի իրականացում, իսկ ՇՄԱԳ-ի բացասական եզրակացության առկայության պարագայում նախատեսվող աշխատանքները պարզապես չեն իրականացվի:

Անդրանիկ Անդրեասյանը խնդրեց ՀՀ Վարչապետի հանձնարարականը համապատասխան գերատեսչություններին, մասնավորապես՝ ՀՀ բնապահպանության նախարարությանը, պետական նշանակության օբյեկտների հետ կապված որևէ թույլտվություն տրամադրելուց առաջ ստանալ համապատասխան ճյուղային գերատեսչությունների համաձայնությունը:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը բարձր գնահատեց մասնավոր ներդրողի հետ համատեղ աշխատանքը՝ միաժամանակ նշելով, որ առաջնայինը ջրօգտագործողների շահերի պաշտպանությունն է:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել մասնավոր ներդրողի հետ պաշտոնական բանակցություններ վարելու և համատեղ քայլերի համաձայնագիր ստորագրելու, և ջրամբարի համատեղ շնարարության Վերջնական նախագիծը մշակելու նպատակով «Հայջրնախագիծ Ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ գործող պայմանագրում փոփոխություն կատարել հարցը:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյան